**Արձանագրություն 3**

**ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ՀԲՄԾՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի**

«20» փետրվար 2020թ.
ժամը՝ 15:00

ք. Երևան

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ***

**Ժ. Տիտիզյան** – ՖՆ գործառնական վարչության պետ

***Անդամներ***

**Գ. Բաղդասարյան** - ՖՆ գործառնական վարչության համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժնի պետ-վարչության պետի տեղակալ

**Լ. Այվազյան** - ՖՆ գործառնական վարչության պետական բյուջեի հաշվառման բաժնի պետ

**Ա. Սարգսյան** – ՖՆ բյուջեների կատարման հաշվետվությունների վարչության ֆինանսական հաշվետվությունների բաժնի պետ

**Գ. Վարդանյան** - ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության գլխավոր մասնագետ

***Գնումները համակարգող***

**Ա. Աղաբաբյան** - ՖՆ ծրագրերի իրականացման վարչության գնումների բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էր՝

***Հանձնաժողովի անդամ***

**Ա. Վարդանյան** - ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ

**1. Տեղեկություններ հայտերի բացման մասին**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերի (փոփոխված) հրապարակվելու օրվան հաջորդող 15-րդ օրը, ժամը 15:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

**2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին**

1.1 ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ՀԲՄԾՁԲ-20/1» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

| Մասնակցի անվանումը | Տվյալները |
|---|---|
| «ԼՍՈՖՏ» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 01202055, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 7-րդ հարկ, էլ հասցե՝ info@lsoft.am, հեռ.՝ +3791406945 |

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին**

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. **Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

«ՀՀ ՖՆ-ՀԲՄԾՁԲ-20/1» ծածկագրով ընթացակարգի մասնակցի կողմից առաջարկված գները ներկայացվում են ստորև՝

| Հ/Հ | ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ) | | | |
|---|---|---|---|---|---|
| | | «ԼՍՈՖՏ» ՍՊԸ | | | |
| | | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ | Ընդհանուր գին |
| 1 | «Գանձապետարանի գործառնական օր» և «Քլիենթ-Թրեժրի» համակարգերի սպասարկման ծառայություններ | 157 000 000 | 9 666 667 | 33 333 333 | 200 000 000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. **Հանձնաժողովի կայացրած որոշումները**

Հանձնաժողովը որոշեց.

1. ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և գների նվազեցման նպատակով վարել բանակցություններ «ԼՍՈՖՏ» ՍՊԸ-ի հետ 10 րոպե տևողությամբ սույն թվականի փետրվարի 25-ին ժամը 15:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

## 6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՀՀ ՖՆ-ՀԲՄԾՁԲ-20/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի փետրվարի 25-ին ժամը 15:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ____________ Ժ. Տիտիզյան

Հանձնաժողովի անդամներ՝ ____________ Գ. Բաղդասարյան

____________ Լ. Այվազյան

____________ Ա. Սարգսյան

____________ Գ. Վարդանյան

Գնումները համակարգող՝ ____________ Ա. Աղաբաբյան